

ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դաստիարակ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքում ուղղագրական սխալ չկա:

- 1) պայուսակ, թպրտալ, անհարկի, կիսափուտ
- 2) արծնապակի, խառնիճաղանջ, ընդդարմանալ, մտացածին
- 3) դափնեվարդ, սեթեվեթել, ալեվարս, արևառ
- 4) վառող, առնչվել, բարյացակամ, հարսնացույի

2

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) բնական, բնաձայնական, բնատուր, բլթակ
- 2) արծաթազօծ, արծաթել, արծճե, արմավենի
- 3) եռաքել, եռաժանի, երախտիք, եղջերու
- 4) գայլորս, գազանային, գառնադեմ, գաճաճ

3

Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:

- 1) գրեթե, աշակերտից, տանուտեր, բարևներ
- 2) այգերաց, երփներանգ, բոստրագույն, օրագիր
- 3) բարեկամ, պանծանք, պատմիչ, սակր
- 4) ճախրել, անտառը, եղնիկ, հրճվանք

4

Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն սխալ տեղադրված:

- 1) ճիւ(ը)լվել
- 2) մք(ը)նկա
- 3) ձեռն(ը)տու
- 4) շր(ը)խկոց

5

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) մանրավաճառ, առևտրական, փերեզակ, չարչի
- 2) շավիդ, կածան, արահետ, բացատ
- 3) նենց, խարերա, խարդախ, գծուծ
- 4) կարողին, հարգալից, գորովալից, սիրալիր

6

Ո՞ր բառում -իք ածանց չկա:

- 1) տանիք
- 2) կարծիք
- 3) աղիք
- 4) չարիք

7

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) համատրամաշափ – **չափ**՝ արմատ, **համ(ա)**, **տրամ** նախածանցներ, **ա**՝ հոդակապ
- 2) նամակադրոշմ – **նամակ**, **դրոշմ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ
- 3) ներգոյական – **զո**՝ արմատ, **ներ**, **ական**՝ ածանցներ
- 4) մոլորակածիր – **մոլորակ**, **ծիր**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ

8

Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:

- 1) Դու շատ լավ գիտես՝ **ստեր** չեմ հանդուրժի:
- 2) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների:
- 3) Քեզնից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
- 4) **Ստեր** տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:

9

Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերքայ կա:

- 1) Վանքի բակից նա արագ դուրս եկավ մղձավանջից խուսափող մարդու նման:
- 2) Ալխոն ճանապարհից դուրս ընկավ, հնձած արտերում դեսուդեն նետվեց.
ազատում չկար. կարմիր բիծը ցատկոտում էր նրա դնչի տակ:
- 3) Բարձրախոսների մոտով մի աղջիկ էր անցնում քաղաքային սահուն քայլերով,
երեխանների ու ձիու լոխիկ ստվերներն օրորվում էին կաթնալույսի մեջ:
- 4) Գետը վարարել էր ու իր հորձանքի մեջ առած ջրլող թռչունների երամը՝
շառաչյունով հոսում էր:

10

Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված լղձական եղանակով:

- 1) չգայի, ընդունվի, հարգեր, լսվեին
- 2) չբերեմ, չեմ բերի, չգրեիր, խոսեմ
- 3) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային
- 4) բերեմ, ունեմ, հարցեմ, ասեմ

11

Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:
- 2) Սեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
- 3) Օրերը ցրտել են, իսկ Արարատյան դաշտում դեռ բերքահավաք է:
- 4) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:

12

Ո՞ր նախադասության մեջ թվական կա:

- 1) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չուներ միայն հինավորց գմբեթարդ Եկեղեցին:
- 2) Նրան պատասխանեց կոչմակի ձայնը, որ քանի՛ անգամ լսելի եղավ Եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:
- 3) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
- 4) Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուրը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:

13

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) հոտավետ, համեստ, լայն, հերոսաբար
- 2) բաղձալի, ամենին, վայելուչ, մկանուտ
- 3) առաջնային, այսպիսի, բարձրորակ, մշտապես
- 4) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ

14

Ո՞ր տարրերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը: (*դերքայ*)
- 2) Նրա մոտ նստածը մանկահասակ, նազեի, սիրունատես երիտասարդ մի կին էր: (*ածական*)
- 3) Նրանք իրարից բոլորովին անջատված հայկական գավառներն էին: (*դերանուն*)
- 4) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները: (*զոյական*)

15

Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Մի աղջիկ իր ընկերուիհների հետ անցավ իբրև մի թարմագեղ գարուն:
- 2) Ծերունի մի դերվիշ ճակատն արևառ եկավ որ սփինքսից հարցումներ անի:
- 3) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
- 4) Այս գեղգեղանքը սիրավառ սրտի մի ամբողջ հեքիաք էր մի դյուքական հեքիաք ծաղիկների բույրով ներդաշնակված:

16

Նախադասության ի՞նչ անդամ է դերքայական դարձվածը:


Չիրվանզաղեի բնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները ճանաչելն էր:

- 1) ստորոգելի
- 2) պատճառի պարագա
- 3) որոշիչ
- 4) ենթակա

17

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Հիմ կամուրջի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շարտում կամարի հիմքերին, թվում է՝ զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը քաժանում է ճյուղերի:



18

Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Աննան ասաց հորը, որ ինքը զիտի, որ նա լավ մարդ է, և իրեն համոզել պետք չէ:

- 1) -Ես զիտեմ՝ նա լավ մարդ է, և ինձ մի՛ համոզիր,-ասաց Աննան հորը:
- 2) -Ես զիտեմ, որ դու լավ մարդ ես, և նրան համոզել պետք չի,-ասաց Աննան հորը:
- 3) -Ես զիտեմ, որ դու լավ մարդ ես, և ինձ համոզել պետք չէ,-ասաց Աննան հորը:
- 4) -Ես զիտեմ և համոզված եմ, որ դու լավ մարդ ես,-ասաց Աննան հորը:

19

Ո՞ր տարրերակում է ընդգծվածը նախադասության անդամ:

- 1) Հեշտ է, **գուցե**, գրքեր գրե՛ և, ո՛չ թե կարդալ...
- 2) Արքաների հետ խոսում են **«գու»-ով**,
Եթե, իհարկե, լսում են նրանց:
- 3) Հաշվեցե՛ք, **խնդրե՛մ**, հաշվեցե՛ք նաև,
Թե մեզնից գոնե՛ մեկը իր կյանքում
Քանի՛ կնոջ է տենչանքով նայել...
- 4) Աշխարհին, **այո՛**, մաքրություն է պետք:

20

Ո՞ր նախադասության մեջ ստորակետ չայխոյ դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Վրանները հավաքելուց և հեռանալուց հետո Մարզարը երկու միտք ուներ
Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:
- 2) Հանկարծ ծոցից հանելով տեսողը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով
նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
- 3) Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ
ինչպես աղբյուրի վճիռ ջուրը:
- 4) Եթե արևը շխտնարհվեր դեպի մայրամուտ նա առանց հոգնության երկար կմնար
այդ դիրքով և չեր հազենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից:

21

Ո՞ր նախադասությունն է արևելահայերենով:

- 1) Թերևս հարցնողներ գտնվին, թե այս մարդն եթե այսափ գործունյա է, հիմա ինչո՞ւ չգործեր:
- 2) Մենք մեր լնիքերցողաց փափազն հագեցնելու համար արժան դատեցինք այս օրվա թերթերնուս մեջ օտար լրագիրներեն քաղվածք մը լնելով հրատարակել:
- 3) Հեռվից մշուշի մեջ Մասիսն ինձ երևաց. իբր ժպտում էր հայրաբար, կանչում էր տուն:
- 4) Ի՞նչ լնելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան:

22

Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

Անմահական ջրբով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա.

Նրստիմ, վրես շրվաք անիս՝ զարրար վրրան իս ինձ ամա.

Սուչս իմացի՛, է նենց սպանե՝ սուլքան ու խան իս ինձ ամա:

- 1) «Դուն է՛ն գրլիսեն իմաստուն իս»
- 2) «Աշխարս մե փանջարա է»
- 3) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 4) «Աշխարումս ախս չիմ քաշի»

23

Հատվածներից ո՞րը Պ. Դուրյանի որ բանաստեղծությունից է:

- | | |
|---|---------------|
| ա. Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ, | 1. «Իմ ցավը» |
| Քուրա մը խոսք դյուրեց իմ սիրտ: | 2. «Տրտունջը» |
| բ. Ո՛հ, կա՛յծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք՝ ապրի՛մ... | 3. «Լճակ» |
| Ի՛նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ... | 4. «Սիրել» |
| գ. Հոդ աստղերը չեն մեռնիր, | |
| Ծաղիկները հոդ չեն թռումիր... | |
| դ. Սուլը տենչերով լոկ ծարաված՝ | |
| Յամաք գտնել աղբերբն համայր... | |

- 1) ա-2, թ-3, զ-4, դ-1
- 2) ա-4, թ-2, զ-3, դ-1
- 3) ա-1, թ-2, զ-3, դ-4
- 4) ա-4, թ-1, զ-3, դ-2

24

Պեղումներից ո՞րն է սխալ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի վերաբերյալ:

- 1) Վեպում Մերուժանի վախճանը ներկայացված չէ:
- 2) Վեպը ունի առաջաբան, որտեղ հեղինակը շարադրում է պատմավեպ գրելու իր սկզբունքները:
- 3) Վեպի «Փակագծերի մեջ» հատվածը թեև անմիջաբար չի առնչվում վիպական գործողություններին, սակայն դարաշրջանի խոր վերլուծությամբ կարևոր դեր է կատարում վեպի բովանդակությունը հասկանալու համար:
- 4) Վեպի գլուխներից մեկում Ռաֆֆին պատկերում է Անհուշ բերդում կալանված հայոց արքայի ողբերգական ինքնասպանությունը:

25

Հեղինակային ի՞նչ նշում կա Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի վերնագրի տակ:

- 1) «Հուսահատված մարդու հիշատակարանից»
- 2) «Իրավաբանի հիշատակարանից»
- 3) «Կյանքի հատակն ընկած մարդու հիշատակարանից»
- 4) «Մի կորած մարդու հիշատակարանից»

26

Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:

- | | |
|---|--|
| 1. Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
Սեր ծնընյան փուշ օրից | 3. Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ |
| 2. Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ | 4. Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից |
-
- 1) 2, 4, 1, 3
 - 2) 1, 3, 2, 4
 - 3) 1, 4, 3, 2
 - 4) 4, 1, 2, 3

27

Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է հետևյալ հատվածը.

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ծյունի մեջ, վզաց,
ինչպես շիկացած խոփը դարրնոցի ջրաքարում։ Երրորդ կրակոցը նրա բերդանի
վերջին ճիշն էր։ Ավին մինչև վերջ էլ շիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը
մերս չառավ։

Արջը ոռնցով մի ոստյուն էլ արեց։ Ավին շատ մոտ զգաց վիրավոր զազանի տաք
շունչը...»։

- 1) «Սպիտակ ձին»
- 2) «Խոնարհ աղջիկը»
- 3) «Մթնաձոր»
- 4) «Միրհավ»

28

Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Ով սահմանում է նոր օրենքը ու կարգ՝
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

- 1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
- 2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվից մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 4) «Վարք մեծաց»

29

Ո՞ր խոսքը Հ. Պարոնյանի «Սեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսին է:

1. «...Բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը.
առտվշնե մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և
կերգեն, կը պարեն և կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվշնե
ըսեմ, վերջեն ինձի պատճառ չբռնես... անանկներ ալ կան,
որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ
գեղ մը կը փախչին...»:
2. «...Անոնք, որ զիրքով կզբաղին, թշվառությանք կզբաղին:
Հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը
պոռանք և դեպի խավար կերթանք, ...ապագա կըսենք և
դեպի անցյալ կը վազենք»:
3. «... անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են,
մենք լույս...անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝
բանջարեղեն...»:
4. «Միտքդ ի՞նչ է, եղբա՛յրս, ես քեզի բան մը չըրի, ինչ կուզես
ինձմե, զնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը...»:

- ա. Արիսողով աղա
բ. բանաստեղծ
գ. վարժապետ
դ. Ծուշան

- 1) 1-ա, 2-զ, 3-դ, 4-բ
- 2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա
- 3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ
- 4) 1-դ, 2-զ, 3-բ, 4-ա

30

**Գ. Զոհրապի «Զարուղոն» նորավեպում Զարուղոնը, տեսնելով իր սիրած աղջկան
որիշ երիտասարդի հետ, չի սպանում վերջինիս, որովհետև՝**

- 1) ափսոսում է իր՝ դժվարությամբ ձեռք բերված ազատությունը:
- 2) խոճում է Վասիլիկին:
- 3) նրան արժանի չի համարում իր վրեմին:
- 4) զգում է, որ այդպիսով չի կարող վերադարձնել իր սիրած աղջկան:

31

Ո՞ր պնդումը Ե. Չարենցի «Դանքեական առասպել» պոեմի վերաբերյալ ճիշտ չէ:

- 1) Պոեմի կենտրոնական դեմքը ինքը՝ զինվոր քանաստեղծն է:
- 2) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների ուրախ տրամադրությամբ:
- 3) Պոեմում կովի որևէ դրվագ անմիջականորեն չի ներկայացվում:
- 4) Պոեմում բանաստեղծը նկարագրում է պատերազմի հետքերը Կարսից մինչև Վան ընկած ճանապարհին:

32

Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հ. Մաքետսյանը չէ:

- 1) «Համբերանքի չիրուխը», «Աշնան արև», «Հայրենի հողը»
- 2) «Արեին», «Նամուս», «Կանաչ դաշտը»
- 3) «Նարինջ զամբիկը», «Քարափը», «Հայ ժողովրդի երգը»
- 4) «Ավելորդը», «Հայոց վիշտը», «Տնիմի կանչը»

33

Բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.

ահազնանալ, ծաղկաշղթա, զուգակցել, տարագրություն, հետաքննություն, հանդնել, աստղադիտարան, մանրախնդրություն, ուղղամտորեն, տարեշրջան:

34

Բառերից քանիսո՞ւմ ի ձայնավորի հնչյունափոխություն կա.

ընչաքաղց, ընդունակ, ընկնել, ընչացք, ընձուղտ, ընկեր:

35

Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակին է սխալ կազմված.

աղբարկեր, պատճեներ, հացատներ, գեղագետներ, փայտահատներ, համհարզեր, նախրապաներ, վերջնագիրներ, վիպագիրներ, շիկահերներ, ռուսամոլեր, խոտհարքեր:

36

Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:

Թութանհամոնը զինու սիրահար է եղել. այսպիսի եզրահանգման են եկել փարավոնին ուսումնասիրած զիտնականները՝ հաշվի առնելով և այն հանգամանքը, որ Եգիպտոսում զինին համարվել է բացառիկ ըմպելիք: Գտնված շշերի վրա եղել են մանրակրկիտ տեղեկություններ հարուստ բերքի մասին և խաղողագործի անունը:

37

Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:

Կարծում եմ, եթե ես այստեղ գայի հազար տարի առաջ, այս քարանձավները կլինեին կենդանի տներ, բակերը՝ աշխույժ երեխանների գոռում-գոչյունից զվարք կզրնգային, թռնիրներից հացի ախորժակ գրգռող բույր կելներ և գետը նման չէր լինի երգեհոնի, որի՝ վաղուց սիրելի դարձած հնչյուններն այժմ հնչում են ոչ ոքի համար:

38

Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.

շրջադասություն, հանգավորում, չափազանցություն, փոխաբերություն, համեմատություն:

Գիշերն է փոել իր թևերը մութ,
Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.-
Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ
Ու ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:

39

Նշել այն բառերի և բառաձևերի համարները, որոնք գծիկով չեն գրվում.

1. ըստ(ամենայնի), 2. վեր(լուծել), 3. հանձն(առնել), 4. դեփ(դեղին), 5. անող(դնող),
6. գիտա(մերողական), 7. սոցիալ(տնտեսական), 8. հնուց(ի)վեր, 9. տուն(տեղ):

40

Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:

1. գետն ամեն անգամ գերան չի բերի – պապն ամեն անգամ զաքա չի ուտի
2. համբերության բաժակը լցվել – դանակը ուկորին հասնել
3. փորացավ ունենալ – անվանը մուր քսել
4. ձեռք բռնել – մատից փուշ հանել

41

Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:

1. Աղբյուրն անուշ հեքիաբի պես
Իր լույս երգով ժպտում էր մեզ.
Դու մոտեցար մեղմ, համրաքայլ
Որպես քնքուշ իրիկվա փայլ:
2. Ու հանդարտ, մեղմաքար
Հոտն իշներ սարից վար,
Գրկեի ես մի գառ,
Ու հոգիս մանկանար:
3. Լույսն էր մեռնում, օրը՝ մքնում,
Սուրբ տնից տուն էր մտնում,
Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ,
Իմ մտերիմ, իմ անծանո՛թ:
4. Ինչ էլ որ ասեն,
Հասկանում եմ լավ,
Բայց պատասխանել
Չեմ կարողանում...

42

Նշել մակրայների համարները.

1. հնտնկայս, 2. հազիվ, 3. մոտակա, 4. բացի, 5. դանդաղորեն, 6. ձեռաց, 7. վերջին,
8. երթկիցե, 9. գոնե:

43

Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:

1. Եվ ինչ որ բերվում էր, վատնվում էր անմիջապես:
2. Կցանկանայի իմանալ, թե ինչն է ձեզ ինձ մոտ բերել:
3. Շատ վտանգավոր էր այն, որ ձիերը շարունակ սայթարում էին:
4. Մեզ վախեցրեց այն, որ անձրևը սաստկացավ:
5. Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:

44

Նշել այն գրողների համարները, որոնք ստեղծագործել են խորհրդային տարիներին.

1. Ա. Բակունից, 2. Մ. Մեծարենց, 3. Մուրացան, 4. Ավ. Խահակյան, 5. Գ. Մահարի,
6. Ալ. Շիրվանզադե, 7. Ռաֆֆի, 8. Հ. Սահյան, 9. Ե. Զարենց:

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրիք՝ *Ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Օրենսդիր, ճերրազատ* բառերում ածանց չկա:
2. Հայերենում վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
3. Ածանցը վերջավորությունից տարբերվում է նրանով, որ ածանցով նոր բառ է կազմվում, իսկ վերջավորությամբ՝ ոչ:
4. Հայերենում կան **ու**, **ե**, **ո** վերջածանցներ և **ա**, **չ** նախածանցներ:
5. Արմատները լինում են ինքնուրույն գործածություն ունեցող և ինքնուրույն գործածությունից զուրկ:
6. *Յավալլուկ, սրտմաշուկ, քամրուկ, քանուկ* բառերը վերջանում են **ուկ** վերջածանցով:

Բ մակարդակ

46

Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) օ-ան, տա-երք, ու-ակի, տա-ալուծել
- 2) ք-ախույզ, այ-ենարան, խճու-ի, բե-իություն
- 3) ու-ալար, հակըն-եմ, մ-կաշունչ, հո-երգություն
- 4) գործու-ում, բու-այսկան, ու-ափառ, հե-են

47

Ո՞ր շարքում հասուկ անվան գրության սխալ կա:

- 1) Աղթամար կղզի, Վանա լիճ, Մեծ Մասիս, «Հայկական Ժամանակ» օրաբերք
- 2) Իրաքի Համրապետություն, Իրն Սինա, Լա Պլաս, Հուլիոս Կեսար
- 3) Արևելյան Եվրոպա, Բոլնիս-Խաչեն, Լատինական Ամերիկա, Բաշ-Ապարան
- 4) Հարուն ալ Ռաշիդ, Դը Լոնգ, Վան Գոգ, Աֆրանստանի Իսլամական Հանրապետություն

48

Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավաճկ կա:

- 1) տվնջյան, տրամաբանել, քստմնելի, օրինել
- 2) աննշնար, անընտել, մրրկող, կարծր
- 3) տվյալ, ճշտություն, գաղտնավաճկ, կրկնապատկել
- 4) չքննադակերտ, վրիժառու, սանրվածք, տտիալ

49

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Աշակերտները պատրաստակամություն հայտնեցին շաբաթօրյակին մասնակցելու:
- 2) Արարատի բարձունքից մեր առջև հառնեց Արագածը՝ սպիտակափառ գագաթով:
- 3) Վանատուրը՝ իբրև աստված, խորհրդանշել է հայ նարդու ասպնջականությունը:
- 4) Ականակիտ խավարի մեջ էին թաղվել շրջակա գյուղերը:

50

Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **օրոց** – մի քանի մարդու համար նախատեսված բազմոց, **հակամեռ** – հակված, տրամադիր
- 2) **միզ** – մետաղյա ամուր ձոր, **հովեկ** – զեփյուռ, մեղմ քամի
- 3) **պարույկ** – հարցական նշան, **լազվարդ** – ընտիր կապույտ ներկ
- 4) **նշարենի** – ծառի տեսակ, **վիրաս** – խոր փոս

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) բանակատեղ, բառապաշար, բարեբնույթ, բարձրանիստ
- 2) խճաքար, որմնադիր, բարեգութ, հնավանդ
- 3) բյուրաքանչ, բազկարձակ, որդեսեր, տնտեսագետ
- 4) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ, բեռնանավ

52

Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:

- 1) հոտավետ, զործոն, գառնարած, խորոված
- 2) երկաթյա, ազդու, առու, ջլուս
- 3) լավություն, փեսացու, դանակ, ձեռք
- 4) տարեկան, բացատ, գյուղացի, նորագույն

53

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

- 1) նման, որոշ, քանիերորդ, այստեղ
- 2) նույնքան, ինչքան, փոքր-ինչ, ոմն
- 3) մի քանի, ոչ ոք, ամենայն, մինչդեռ
- 4) համայն, իրենք, ինչ-ինչ, միմյանց

54

Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Սիրտ իմ, ինչո՞ւ ես նորից խոռվել,
Իզուր ինձ ու քեզ ինչո՞ւ ես տանջում...
- 2) Բայց աչքերը մեր արևեներ չտեսան,
Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
- 3) Ելի գարուն կգա, կբացվի վարդը:
- 4) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

55

Ո՞ր տարրերակում բաղադրյալ ժամանակածն կա:

- 1) Լավություն արա ու ջուրը նետիր...
- 2) Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ:
- 3) Երկու ձիգ տարի նա այսպես պիտի
Ման զա երգելով ու շուրջը դիտի...
- 4) Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
- 5) Եթե հիվանդ ես դու, և տկար է ոգիդ,
Եթե հոգնություն է քո երակներում,
Այս երգս քեզ չի ամորի...

56

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Այդ դեպքերից հետո ես երբեք չեմ մոռանա այն գարնան իրիկունը:
- 2) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
- 3) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և սերմ, և սերմնացան:
- 4) Հորեղբայրս պատմում էր երկու արաբների՝ իմաստունի և հիմարի պատմությունը:

57

Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ:
- 2) Ծխելն արգելվում է:
- 3) Վարդի մուրաքան պատրաստում են թեյի վարդից:
- 4) Կովով քաշվել աջակողմյան լեռնակիրճը:

58

Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:

Մթնաձոր տանող միակ արահետմ առաջին ձյունի հետ փակվում է. ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

1. տանող (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. տեղի պարագա)
 2. արահետն (ա. ենթակա, բ. ստորոգելի, գ. տեղի պարագա)
 3. ոչ մի (ա. ենթակա, բ. որոշիչ, գ. չափի պարագա)
 4. ոտք չի դնում (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. զիջման պարագա)
-
- 1) 1-ա, 2-ա, 3-բ, 4-գ
 - 2) 1-գ, 2-ա, 3-գ, 4-բ
 - 3) 1-գ, 2-գ, 3-ա, 4-ա
 - 4) 1-ա, 2-ա, 3-բ, 4-ա

59

Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:

- 1) Մենք ուզում ենք շուտ ծանոթանալ մեկմեկու նախասիրություններին, բնավորությանը:
- 2) Պատանի հասակում հեռացել էր տնից:
- 3) Պատարագն ավարտելուց հետո հայրենասիրական ճառ ասաց:
- 4) Մինչև պատվիրակների ժամանելը ամեն ինչ պատրաստ էր:

60

Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:

- 1) Մարդու ողբերգությունը սկսվում է սեփական անզորությունը զիտակցելուց:
- 2) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հողացավից նվալու վտանգից:
- 3) Գարնանային երկինքը պատված էր սև ու մոայլ ամպերով:
- 4) Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
Զեր անդունդներով եկե՛ք չափվեցե՞ք...

61

Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Այդ փողոցից կարելի է մտնել մեկ ուրիշ փողոց այնտեղից մի փոքրիկ նրբանցք որ նման է մրջնանցից:
- 2) Սիանգամայն սրափ վիճակում էի բայց այդ վայրերում ծնված ու մեծացած որտորդս չգիտես ինչու առանց պատճառի սկսեցի երեխայի պես հեկեկալ թարտացող սրտիս համակած տարօրինակ ճնշումից:
- 3) Սիմոնը հետ նայեց Արշակ քեռին ջրի մյուս կողմն էր կռացած փնտրում էր անցնելու տեղ առվի վրա:
- 4) Տղան կանգ է առնում և ընկերները նրա շուրջը շարվում են հոգնած զայրացած:

62

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Նորավեպը փոքրածավալ արձակ ստեղծագործություն է, որտեղ գործողությունները զարգանում են արագ ու սրբնաց: Այն ունենում է կտրուկ ու անսպասելի ավարտ:
- 2) Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը գրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին:
- 3) Վ. Տերյանի «Երկիր Նախրի» շարքը նվիրված է միջնադարյան հայ մատենագիրներին:
- 4) Ե. Չարենցը նորագույն շրջանի հայ գրականության սկզբնավորողն է:

63

Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:

Ուժողանական բանաստեղծությունն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:

- 1) տրիոլետ
- 2) հայրեն
- 3) սոնետ
- 4) գաղել

64

Բառերից և բառաձևերից քանիսի^օ բոլոր վանկերն են փակ.

պայմաններ, կազմակերպել, աշխատեցնել, երկրորդ, կողմնորոշվել, փաստաթուղթ, խնդիրներ, հստակեցվել, ստեղծել, անձնական, երկրակեղև, մշակույթ:

65

Քանի^օ գոյական կա տրված հատվածում:

Ե՛վ հայոց մեր շարժուձեր, որն այնքան բան է ասում, և՛ ծնկներին խփելն ու պայթուն ծիծաղը, և՛ հայերեն բառը, նայվածքը, ժպիտը զարմանալի այս ցեղի զորավոր հառնումն են ցուցադրում:

66

Տրվածներից քանի՞ն են ճիշտ Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ:

- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ հերթական ճակատամարտում մատնությամբ թշնամուց պարտված քաջ զորականը հեռանում է սեփական երկրից:
- «Օտար, ամայի ճամփերի վրա» բանաստեղծության մեջ հեղինակը պնդում է, որ կինը չուտ է մոռանում արցունքներ, և ինքը չի հավատում նրա համբույրին:
- Ավետիք Իսահակյանը աշխարհաբողության թեմային անդրադարձել է միայն «Արու-Լալա Մահարի» պոեմում:
- «Սև-մութ ամպեր» բանաստեղծության մեջ հեղինակը զրուցում է Ալագյազի հետ՝ համոզված պնդելով, որ իր դարդի պես դարդ ոչ մեկը չունի, և հավքերն ու հովերն անգամ չեն դիմանա դրան:

67

Նշել այն բառերի համարները, որոնք լրացրանուր արմատ ունեն.

- Խմբապար, 2. պարահանդես, 3. զուգապար, 4. առապար, 5. մենապար:

68

Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:

- Տղայի համար կարևոր անձնագործություն ցույց տալն է:*
Տղայի համար կարևորն այն է, որ անձնագործություն ցույց տա:
- Երեխան անհամբեր սպասում էր մոր՝ իրեն կերակրելուն:*
Երեխան անհամբեր սպասում էր մորը, որ իրեն կկերակրի:
- Մտածում եմ նրանից ինչպես հեռանալու մասին:*
Մտածում եմ այն նասին, թե ինչպես հեռանամ նրանից:
- Ես միանգամայն հավատում էի նրա մեղավոր լինելուն:*
Ես միանգամայն հավատում էի, որ նա մեղավոր է:

69

Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է նախադասությունների տրամաբանական հաջորդականությանը:

- Եզրակացները բոլոր հուշարձաններն ել աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու այշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Ջենփսի հիանալի բուրգը:
- Իսկապես, եզրակացները մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից մարդկանց քաշում են դեպի Եզրակացնություն:
- Այդ հուշարձանները աներկրայորեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահնու Նեղոսի կանաչագարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրբաններից մեկը:
- Եզրակացները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության թատերաբեմից դարեր առաջ են հեռացել, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են թողել:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրիք Շիշտ է, Մխալ է, Զգիտես տարրերակներից որևէ մեկը:

1. **ՈՉ** հոլովման պատկանող բոլոր բառերը չունեն ներգոյական հոլով:
2. **ԱՅ** հոլովման ենթարկվող բառերից մի քանիսը կարող են հոլովվել նաև **ՎԱ** հոլովմամբ:
3. Գրաբարյան **Ա** վերջնահնչյուն ունեցող բոլոր այն միավանկ բառերը, որոնք հոգնակին կազմում են **ԱԵՐ** վերջավորությամբ, ենթարկվում են **ԱՅ** արտաքին հոլովման:
4. **ՈՒ** հոլովման է ենթարկվում բոլոր բայերի անորոշ դերբայը:
5. **Ա** ներքին հոլովման ենթարկվող բոլոր բառերի գործիականը կարող է կազմվել և՝ **ԱՎ**, և՝ **Բ** վերջավորություններով:
6. **Յ** հոլովման ենթարկվում են միայն **ԱՃՐ**, **ԵՃՐ**, **ՈՃՐ** ածանցներով հավաքական գոյականները: